



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ

«Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագիրը իրականացրել է «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,924,000 ՀՀ դրամ, որից 1,328,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր  
«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն»  
**«ՄՈՑԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոն**  
«Իրավաբանների հայկական ասոցիացիա»  
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»



«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի»  
կողմից իրականացվող

«Հայաստան ներկրվող ավտոմեքենաների  
մաքսազերծման ընթացքում  
կոռուպցիոն ռիսկերի վերհանում»  
ծրագրի շրջանակում

բարեփոխումների իրականացմանն ուղղված  
առաջարկներ մշակելու համար  
սոցիոլոգիական հետազոտության

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ԵՐԵՎԱՆ-ՎԱՆԱՁՈՐ-2016

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

<b>1. Ներածություն</b> .....	3
<b>2. Հարցման մասնակիցների ընտրանին</b> .....	3
<b>3. SU-ների մաքսագերծման իրավիճակի նկարագրությունը</b>	
3.1 Իրավական կարգավորիչները .....	4
3.2 Տրանսպորտային միջոցների մաքսագերծման համար անհրաժեշտ արարողակարգը.	4
3.3 Տրանսպորտային միջոցների մաքսագերծման գումարի չափի խնդիրը.....	4
<b>4. Մտացված տվյալների վերլուծությունը</b>	
4.1 Կոռուպցիոն ռիսկերի նախադրյալները .....	5
4.2 Մաքսագերծման հայտարարագրի ներկայացման իրավիճակը.....	6
4.3 Մաքսագերծման գործողությունների իրականացման իրավիճակը.....	7
4.4 Տրանսպորտային միջոցների մաքսագերծման գումարի սահմանման հիմնահարցը.....	8
4.5 Տրանսպորտային միջոցների մաքսատան դերակատարությունը մաքսագերծման գործընթացներում.....	9
4.6 SU-ների մաքսատան աշխատակիցների կարծիքը մաքսագերծման գործընթացների բարելավման ուղիների վերաբերյալ.....	10
4.7 SU-ների մաքսատան աշխատակիցների ինքնազնսհատականը և վերաբերմունքը կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ .....	10
<b>5. Եզրակացություններ և առաջարկներ</b> .....	12
<b>Ամփոփագիր</b> .....	13

## 1. Ներածություն

«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» (ՀՄԻԿ) ՀԿ-ի կողմից իրականացվող «Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագրի շրջանակում՝ կոռուպցիոն ռիսկերը վերհանելու և հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի շրջանակում անհրաժեշտ էր պարզել հետևյալը.

1. Տրանսպորտային միջոցների (SU-ների) մաքսագերծման գործընթացի հետևյալ բաղադրիչները.

- մաքսագերծման կանոնակարգի մասին կողմերի իրազեկության մակարդակն ու աղբյուրները,
- մաքսագերծման հայտարարագիր ներկայացնելու համար մաքսագերծողի կարողությունները
- մաքսագերծման ընթացքում հանդիպած խոչընդոտները,
- ում օգնությամբ կամ ինչ միջոցներով են հաղթահարվել կամ շրջանցվել այդ խոչընդոտները,
- հարցման մասնակիցների կարծիքը մաքսագերծման բարդություններից խուսափելու և կանոնակարգի բարելավելու վերաբերյալ

2. Մաքսագերծման գործընթացի կոռուպցիոն ռիսկ պարունակող դրվագները և դրանց նվազեցման ուղիները:

## 2. Հարցման մասնակիցների ընտրանին

Հարցման համար ընդգրկվել էին մոտ 200 անձ, նրանցից 46-ը տարբեր պատճառներով չեն մասնակցել հարցմանը, իսկ մասնկցած 145-ը կազմել են միջին տարեկան մաքսագերծողների մոտ 1%-ը, ինչը ապահովել է տվյալների 95% հավաստիությունը.

*Աղյուսակ 1*

	Մասնակիցների կարգավիճակը	Հարցման մասնակից			
		ընդգրկված		Հարցված	
1	Իրավաբանական և ֆիզիկական անձ	185		145	
2	SU-ների մաքսատան	աշխատակից		9	15
3		բրոքեր		6	
		200		154	

Հարցման ենթարկված մաքսագերծողների կազմը այսպիսին է.

*Աղյուսակ 2*

Ներկրող անձը		Իրավաբանական	Ֆիզիկական	Պետական հիմնարկ	ընդ
Ներկրված SU-ը					
1	/ Բեռնատար / Շինարարական / Ավտոբուս	5	8	-	13
2	Բարձր դասի մարդատար	7	10	5	22
3	Միջին դասի մարդատար	8	45	-	53
4	Ցածր դասի մարդատար	-	57	-	57
		20	120	5	145

SU-ների մաքսատան աշխատակիցների ու բրոքերների հարցումը համաձայնացվել է նրանց ղեկավարության հետ, իսկ մաքսագերծողները ընտրվել են պատահական ընտրանքով, օգտվելով տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

Հարցումների համար մշակվել են փակ, կիսաբաց և բաց հարցեր պարունակող 2 հարցաթերթիկ՝ մաքսագերծողների և մաքսատան աշխատակիցների համար:

Հարցումները անցկացվել են «դեմ-առ-դեմ», ըստ հարցվողի հարմարության՝ աշխատանքի, բնակեցման, SU-ի կայանքի վայրում, կամ հեռախոսով՝ ըստ նախօրոք կազմված ցուցակների:

### 3. SU-ների մաքսագերծման իրավիճակի նկարագրությունը

#### 3.1 Իրավական կարգավորիչները

Մաքսագերծման գործընթացը կարգավորված է մի շարք, ժամանակ առ ժամանակ փոփոխվող օրենքներով՝

- “Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքով”,
- “Մաքսային Միության մաքսային օրենսգրքով”
- Միջազգային ստանդարտներով ու համաձայնագրերով

և այլ իրավական ակտերով, դրանց թվում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերով՝ մասնավորապես մաքսային ծառայություն կառույցներում, ներառյալ SU մաքսատունը, 2009-2012 թթ իրականացված նման ծրագրով:

#### 3.2 SU-ի մաքսագերծման համար անհրաժեշտ է արարողակարգը.

- գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել միջազգային ստանդարտների համապատասխանող հայտարարագիր
- հայտարարագրի և կցված փաստաթղթերի հիման վրա որոշվում է մաքսագերծման գումարի չափը, որի վճարումից հետո SU-ը նոր համարվում է ներկրված:

**3.3 SU-ի մաքսագերծման գումարի չափը** կախված է մեքենայի շարժիչի ծավալից և մեքենայի տարիքից: Այդ գումարի չափը հաստատող ատյանը (որը SU մաքսատան վերադաս մարմինն է) պարտադիր նշում է գումարի նվազագույն շեմը (*ոչ պակաս, քան ...*):

Այսինքն, մաքսագերծման գումարը ունի տատանվող բնույթ և իրեն բնորոշ հետևանքները:

Մաքսագերծման գումարը կազմում է մեքենայի գնահատված արժեքի

*Աղյուսակ 3*

	Մեքենայի տարիքը	Գումարի չափը
1	մինչև 5 տարեկան	32%
2	մինչև 10 տարեկան	34%
3	11-15 տարվա	42%
4	15 տարուց հին	52%


20% - ի հասնող տարբերության կիրառումը հասկանալի է՝ խրախուսել նոր SU-ների ներկրումը, որոնք թեպետ ավելի թանկ են, բայց բարվոք վիճակում: Բայց դրա սոցիալական հետևանքը լրիվ այլ է, ինչը երևում է 2001-2015 թթ ներկրված 360000 SU-մերի արժեքից՝ ներկրողները ստիպված նախընտրում են էժանագին, թեպետ օգտագործված SU-ներ.

*Աղյուսակ 4*

Արժեքը	Ներկրված քանակը	%	
\$5000-ից պակաս	180000	50	78
\$5000 - \$10000	101000	28	
\$10000 - \$15000	36000	10	22
\$15000 - \$30000	31000	8	
\$30000-ից ավելի	13000	4	
	360000	100	

Միայն ամեն 5-րդ ՏՄ-ը կարելի է համարել մինչև 5 տարեկան՝ 32-34% մաքսագերծման գումարով: “Second hand” կարգի մյուս 4-ը հարկվում են 42-52%-ով: Զարմանալի չէ, որ հանդես է եկել «մաքսագերծման համար պահանջվող գումար տրամադրող վարկային ծառայություն» մատուցող մասնավոր ընկերություն:

Գծանկար 1



#### 4. Ստացված տվյալների վերլուծությունը


4.1 Կոռուպցիոն ռիսկերի նախադրյալների հիմնականը՝ մաքսագերծման կանոնակարգի վերաբերյալ կողմերի անիրազեկությունն է, ինչը կամա թե ակամա հնարավոր է դարձնում տարբեր չարաշահումների առաջացումը:

Այն հարցին, թե որքանով են իրենց համարել իրազեկ մաքսագերծման կանոնակարգի մասին մինչև ներկրելը, պատասխանները բաշխվել են այսպես.

Աղյուսակ 6

	Իրազեկության մակարդակը	%	
1	համարյա լրիվ	15	30
2	հիմնականում	15	
3	մոտավոր	15	15
4	ադոտ	50	50
5	Պատասխան չկա	5	5
		100	

Գծանկար 2



Փաստացի՝ մաքսագերծողների կեսից ավելին աղոտ կամ մոտավոր է պատկերացնում մաքսագերծման գործընթացը, ինչը սարսափելի չէ, բրոքերների գոյության պարագայում: Բայց դա լրացուցիչ ծախս է էժանագին ՏՄ ներկրողների համար, և նրանք կարծում են, որ գործընթացը խճճված է հավելյալ վճարովի ծառայություն մատուցելու համար:

Որպես իրազեկման աղբյուր հարցված մաքսագերծողները նշել են

*Աղյուսակ 7*

	Իրազեկման աղբյուրը	%
1	Գիտեմ ծանոթներից	80
2	Ուսումնասիրել եմ օրենսդրությունը ինքնուրույն	10
3	Ստացել եմ մասնագետի խորհրդատվություն	5
4	Կայքից	5
5	Անցել եմ դասընթաց/ուսումնավարժանք/	0

Մաքսագերծման հետ կապված հետևյալ կողմերի մասին իրազեկությունը այսպիսին է (%-ով)

*Աղյուսակ 8*

		Իրազեկվածությունը (%-ով)			
		լրիվ	մոտավոր	աղոտ	պ/ չկա
1	Մաքսագերծման իրականացման վայրի մասին	75	15	5	5
2	Հատկացվող ժամանակի	45	35	25	10
3	Պահանջվող փաստաթղթերի	35	40	20	5
4	Բողոքարկման կանոնների	30	5	20	45
5	Մաքսագերծման գումարների չափի որոշման	25	25	30	20
	Միջին կշռված	41	23	19	17

«Ուտքի վրա», ծանոթներից ձեռք բերած տեղեկությունները նվազեցնում են իրազեկությունը՝ օրինակ՝ պահանջվող փաստաթղթերի մասին իրազեկ է 35%-ը, մաքսագերծման գումարների չափի որոշման մասին՝ 25%, իսկ բողոքարկման կանոնների մասին՝ 30%-ը:

#### 4.2 Մաքսագերծման հայտարարագրի ներկայացման իրավիճակը

Ակնհայտ է, որ իրազեկության նման մակարդակը մաքսագերծողների մեծամասնության համար անհնար է դարձնում ինքնուրույն լրացնել և ներկայացնել մաքսագերծման հայտարարագիրը, ինչը նույնպես մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը:

Այն հարցին, թե փորձել են մաքսագերծման հայտարարագիրը ինքնուրույն ներկայացնել, մաքսագերծողները տվել են այսպիսի պատասխաններ.

*Աղյուսակ 9*

Այո, փորձել են	20%
Վստահ չեն եղել արդյունքում	5%
Չեն հիշում	40%
Պատասխան չկա	35%

Իսկ 20% հայտարարագիր ներկայացնողների արդյունքը այսպիսին էր.

**Աղյուսակ 10**

Դրական էր	5%
Մերժել են անհիմն	5%
Միայլ էր	5%
Այլ	5%

5% հաջող հայտարարագիր ներկայացնողները, սովորաբար, իրավաբանական անձերի գործակալներն են, որոնք ունեն պահանջվող պատրաստվածություն ու բազմամյա փորձ, հենց և 5%-ն էլ կազմում են SU մաքսատան պաշտոնական կայքից օգտվողները (տես **Աղյուսակ 7**), քանի որ դա պահանջում է 3 նախապայման՝ համակարգիչի առկայություն, օգտվելու հմտություն և մաքսագերծման հայտարարագիր լրացնելու ունակություն: **Առավել անհույս է էլեկտրոնային հայտարարագրի ներկայացման իրավիճակը՝** 5%-ն է օգտվում կայքից, իսկ էլեկտրոնային հայտարարագիր ներկայացնողները եզակի են:

Նման իրավիճակը SU մաքսատան աշխատակիցների կողմից բացատրվում է մի քանի հանգամանքներով, որոնք ընդունում են նաև բրոքերները.

- **մաքսագերծողների տարրական անգրագիտությունը,**
- **ինտերնետի անմատչելիությունը,**
- **միջազգային ստանդարտ հայտարարագրի լրացման բարդությունը՝ նրանց համար**

**4.3 Մաքսագերծման գործողությունների իրականացման իրավիճակը**

Քանի որ հարցված մաքսագերծողների միայն 5%-ն է ինքնուրույն հասնում բարեհաջող մաքսագերծմանը, հարց է ծագում, թե ինչպե՞ս է այդ տեղի ունենում մնացածների մոտ:

Նախ, անհրաժեշտ է եղել պարզել, թե ինչպիսի խոչընդոտների են հանդիպել հարցման մասնակիցները **մաքսագերծման գործընթացում** (կարող էին նշել միայն 5 կարևորները)

**Աղյուսակ 11**

	հանդիպած խոչընդոտներ	%
1	Ավելորդ քաշքշուկները	10,0
2	Տրամադրվող տեղեկատվության պակասը	5,0
3	Մաքսագերծման գումարի կամայական սահմանումը	5,0
4	Մաքսային միությանը միանալը	5,0
	Դժվարացել են պատասխանել	75

Պատասխաններից կարելի է եզրակացնել, որ խոչընդոտներից ավելի հաճախ հանդիպում են ինքնուրույն մաքսագերծողները:

Հետաքրքրական է այն, թե մյուսները

- ինչպես են հաղթահարել կամ շրջանցել այդ խոչընդոտները

**Աղյուսակ 12**

1	Ստիպված վճարել են աջակցողին	15%
---	-----------------------------	-----



2	Մեքենան հետ են տարել ու նորից ներկրել	5%
3	Պատասխան չկա	80%

- և ում օգնությամբ են կատարել մաքսազերծումը

*Աղյուսակ 13*

1	Բրոքերի	25%	
2	Մի կերպ ինքնուրույն	5%	
3	Մաքսակետի աշխատողի	անվճար	0
		վճարովի	0
4	Փորձառու ծանոթի	0	
	Դժվարացել են պատասխանել		

Վստահորեն կարելի է նշել, որ նրանք, ովքեր դժվարացել են պատասխանել, բայց այնուհանդերձ մաքսազերծել են SU-ը, օգտվել են կամ մաքսատան աշխատակցների (թեպետ ժխտում են նման բան) ու բրոքերների ոչ-պաշտոնական աջակցությունից, կամ էլ ինչ-որ 4-րդ կողմի միջնորդությունից:

#### 4.4 SU-ների մաքսազերծման գումարների սահմանման հիմնահարցը

SU-ների մաքսազերծման գումարների սահմանումը մաքսազերծման մասնակիցների համար ամենավիճահարույց հարցն է, քանի որ այստեղ բախվում են պետության և բնակչության զգալի զանգվածի ու մասնավոր հատվածի շահերը:

Հարցման շրջանակում նախ պարզվել է, թե մաքսազերծման գումարի չափի որոշման որ մեթոդն է, ըստ մաքսազերծողների, առավել արդար և՛ պետության, և՛ մաքսազերծողի համար

*Աղյուսակ 14*

	հենվել տվյալ տրանսպորտային միջոցի	%
1	գործարքային գնի + հավելյալ ծախսերի վրա	45,0
2	միջին միջազգային շուկայական գնի վրա	30,0
3	միջին տեղական շուկայական գնի վրա	20,0
	Պատասխան չկա	5,0

Մաքսազերծողները գտնում են, որ տեղական SU-ների շուկայական գինը մաքսային վճարների շնորհիվ արհեստականորեն բարձրանում է և մինչև 52% ավելի թանկ է քան հարևան Վրաստանում և մինչև վերջերս և Ռուսաստանում:


Քանի որ «second hand» ներկրվող SU-ների գործարքային գինը տեղական շուկայականից զգալիորեն ցածր է, մաքսազերծման գումարը որոշվում է միջին տեղական շուկայի գնով, հարց է ծագում, թե ով պետք է որոշի միջին շուկայական գինը:

Այդ հարցին մաքսազերծողների տված պատասխանները այսպիսին էին.

*Աղյուսակ 15*

	միջին շուկայակա գինը որոշող ատյանը	%
1	Կառավարությունը	15
2	Արտոնագրված գործակալությունը	10
3	Անկախ Փորձագետը	5
4	Մաքսատունը / ՊԵԿ-ը	0
	Պատասխան չկա	70

*Գծանկար 3*



**2 հանգամանք.**

1. 70%-ի համար նշանակություն չունի որոշող ատյանը
2. Բոլորը բացառել են Մաքստան / ՊԵԿ-ի կողմից նման գնի որոշումը
3. Պետական և ոչ-պետական ատյանների կողմնակիցները հավասար են՝ 15:15-ի

**4.5 SU-ների մաքսատան դերակատարությունը մաքսագերծման գործընթացներում**

Մաքսագերծման գործընթացներում SU-ների մաքսատան դերակատարության ընկալումը նրա ծառայություններից օգտվողների տեսանկյունից կարևոր է նրանով, որ օգտվողների պատկերացումները հաճախ հեռու են մաքսատան պաշտոնական իրավասություններից: Պոտենցիալ ներկրողների մոտ պետք է հստակ պատկերացում ձևավորել մաքսագերծման գործընթացներում SU-ների մաքսատան իրական կարողությունների վերաբերյալ:

**Այն հարցին, թե որքանով է նշանակալից մաքսատան պաշտոնյաների դերը հետևյալ ներքոբերված հարցերում, տրվել են հետևյալ պատասխանները.**

*Աղյուսակ 16*

		շատ	չափավոր	նայած	աննշան
1	Մաքսագերծման կարգի մասին իրազեկումը	75%	0	10%	0
2	Պահանջվող փաստաթղթերի ընդունումը	85%	5%	5%	0
3	Հատկացվող ժամանակում տեղավորվելը	85%	10%	5%	0
4	Մաքսագերծման գումարի չափի որոշման	85%	10%	5%	0
	<b>Այլ</b>	15%	0	0	0

**Բացի «մաքսագերծման գումարի չափի որոշման» բաղադրիչից, ինչը դժգոհության հիմնական առիթ է հանդիսանում, մյուս գործողություններն անկասկած մտնում են SU-ների մաքսատան կողմից տրամադրվող ծառայությունների մեջ, և այն, որ դրանց մեծ նշանակություն են վերագրվում, հուշում է նրանց որոշ կոռուպցիոն ռիսկ ունենալու մասին:**

Քանի որ SU-ների մաքսատունը ներգավված է եղել Կառավարության 2006-2009 թթ հակակոռուպցիոն ծրագրի մեջ և մի շարք օրենսդրական և գործնական բարեփոխումներ է իրականացրել, նախկինում մաքսագերծողների ենթախմբում պարզվել է, թե ինչպիսի փոփոխություններ են նրանք նկատել նախկին և ներկայիս գործընթացների մեջ:

*Աղյուսակ 17*

	Մաքսագերծման գործողությունները	Մաքսագերծման գործընթացները			
		լավացել է	նույնը լավ	վատացել է	նույնը վատ
1	Մաքսագերծման մասին ճիշտ իրազեկելու	15	10	5	20
2	Պահանջվող փաստաթղթերի ընդունելու	15	25	0	15

3	Հատկացվող ժամանակում տեղավորվելու	10	25	0	20
4	Մաքսագերծման գումարի չափը որոշելու	15	15	10	15
5	Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	5	10	0	10
		+ 60	+ 85	- 80	- 15

Նախկինում լավ ու վատը հարաբերվում էին +1 : -1, բարեփոխումներում + 4 : -1 : Ներկայիս բարեփոխված վիճակի լավն ու վատը հարաբերվում են +1,5 : - 1, այսինքն, մաքսատան աշխատանքում մաքսագերծողները դրական շարժ են նկատել՝ նույնիսկ մաքսագերծման գումարի չափը որոշելու խնդրում: Բայց դա դեռ սպասարկման ցանկալի մակարդակ չէ:

*Աղյուսակ 18*

		լավ էր+ լավացել է	վատ էր+ վատացել է	Շարժը
1	Մաքսագերծման մասին ճիշտ իրազեկելու	25	25	0
2	Պահանջվող փաստաթղթերի ընդունելու	40	15	+2,7
3	Հատկացվող ժամանակում տեղավորվելու	35	20	+1,7
4	Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	15	10	+1,5
5	Մաքսագերծման գումարի չափը որոշելու	30	25	+1,2
	Միջինը	(+ 60)	(- 40)	+1,5

#### 4.6 SU-ների մաքսատան կարծիքը մաքսագերծման գործընթացների բարելավման մասին

Ըստ հարցված մաքսագերծողների, մաքսագերծման հետ կապված բարդություններից խուսափելու համար առավել կարևոր է ձեռնարկել հետևյալը.

*Աղյուսակ 19*

		Պարտադիր	Ցանկալի	միասին
1	Կոռուպցիոն ռիսկերի բացառումը	40%	35%	75%
2	Պարզեցնել մաքսագերծման գումարի հաշվառման մեթոդը	40%	25%	65%
3	Կատարելագործել մաքսային օրենսդրությունը և կանոնակարգը	30%	15%	45%
4	Մաքսային ծառայության կադրերի ճիշտ ընտրությունը	25%	15%	40%
5	Կայքի մատչելիություն	-	15%	15%
6	Ծրագրերի թարմացում	-	5%	5%
7	Աշխատեն օրենքով	-	5%	5%
8	Օրենքը փոխվի (Վրաստանի նման լինի)	-	5%	5%

Կոռուպցիոն ղեպքերը, այնուհանդերձ, գոյություն ունեն, ինչը մաքսագերծողների համար առավել կարևորագույն խնդիր է՝ մաքսագերծման գումարի արդար հաշվառմամբ հանդերձ:

#### 4.7 SU-ների մաքսատան աշխատակիցների ինքնագնահատականը և վերաբերմունքը կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ

SU-ների մաքսատանը Կառավարության 2006-2009թթ հակակոռուպցիոն ծրագիրը, ըստ մաքսատան աշխատակիցների, նախկինի համեմատ սովել է հետևյալ արդյունքները.

*Աղյուսակ 20*

	Ծառայությունների տրամադրման մակարդակը	հոգի
1	Ընդհանուր առմամբ, որակապես բարձրացել է	5
2	Որոշ կողմերում որակապես բարձրացել է	2
3	Մնացել է նույնը, քանի որ լուրջ փոփոխման կարիք չի եղել	1
4	Մնացել է նույնը, թեպետ լուրջ փոփոխման կարիք է եղել	-
5	Ավելի վատացել է	-

Պատասխաններից երևում է, որ նրանց գործունեությունը կատարելագործման կարիք ունի: Փաստորեն, աշխատակիցներից միայն մեկն է վստահ, որ լուրջ փոփոխման կարիք չի եղել: Առանձին բաղադրիչների բարեփոխման առումով նրանք նշել են հետևյալ խնդիրները.

*Աղյուսակ 21*

			հոգի
1	Օրենսդրության հստակեցում, պարզեցում	մասամբ, թերություններ կան	3
2	Հաճախորդին ճիշտ տեղեկացնելը	անվճար	4
6	Պահանջվող փաստաթղթերի նվազեցում	անհնար է, ստանդարտ է	8
4	Հատկացվող ժամանակի կրճատում	կարիք չունի, եթե հայտը նորմալ է	8
5	Մաքսագերծման գումարի հաշվառման մեթոդը	միջին շուկայական գինը	3
6	Բողոքների լուծման կարգը	դիմել վերադասին	6
7	Մաքսատան կադրերի ընտրությունը	Մրցույթով	6

**SU-ների մաքսատան աշխատակիցները հստակ գիտակցում են իրենց իրավասության սահմանները, եթե նույնիսկ որևէ հանգամանք բարդացնում է իրենց աշխատանքը, օրինակ, վերադասի կողմից մաքսագերծման գումարի հաստատված չափերը, նրանք հանդես չեն գալիս փոփոխման առաջարկներով:**

Ինչ վերաբերում է մաքսային ծառայությունը կոռուպցիոն ռիսկերից բացառմանը, ըստ մաքսատան աշխատակիցների, կոռուպցիայի կանխարգելիչ միջոցներն են.

*Աղյուսակ 22*

	Կոռուպցիայի կանխարգելիչ միջոցներն են	հոգի	
1	Աշխատողների սոցիալական կարիքների բավարարումը	5	
2	Աշխատանքային հստակ կանոնակարգի կատարումը	4	
3	Կադրերի ճիշտ ընտրությունը, նշանակումն ու առաջադրումը	1	
4	Աշխատանքի խիստ վերահսկողություն վերադաս ատյանների կողմից	-	
5	Աշխատանքի վերահսկողություն	3-րդ մարմնի կողմից	-
		հանրության կողմից	-

Կարևոր է նաև մաքսային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների և հարակից որոշումների վերաբերյալ մաքսատան աշխատակիցների իրազեկվածությունն ու գործնական կիրառման հմտությունների ձեռք բերումը՝ օրինակ, Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու կապակցությամբ:

Մաքսատան ծառայողները իրենց մասնագիտական պատրաստվածության պատշաճ մակարդակի ապահովման համար նպատակահարմար են գտել հետևյալ միջոցները.

*Աղյուսակ 23*

	Պատրաստվածության մակարդակի ապահովման միջոցները	հոգի		
1.	Փորձի փոխանակումը	Տեղում	3	6
		Գործուղում	3	
2.	Ուսումնավարժանքները	աշխատանքային ժամերի հաշվին	4	5
		ոչ աշխատանքային ժամերի հաշվին	1	
3.	Համացանցը	պաշտոնական կայքը	1	1
		հատուկ կայքը	-	
4.	Տպագիր	անհատական հուշագիրը	1	1
		պատի պաստառը	-	

Պատասխաններից բխում է, որ.

1. SU-ների մաքսատան աշխատակազմը ունակ է ինքնուրույն և տեսականորեն յուրացնել Մաքսային օրենսդրության և հարակից որոշումների փոփոխությունները, քանի որ բոլորը ունեն բարձրագույն տնտեսագիտական կամ իրավաբանական կրթություն և մրցութային կարգով են ընդունվել աշխատանքի: Բայց նրանց ավելի մտահոգում է գիտելիքի կիրառման կողմը, որն ավելի կարևոր է նրանց պարտականությունների հստակ կատարման համար:
2. Վերը նշվածով կարելի է բացատրել մաքսատան աշխատակիցների.
  - օրենսդրության և հարակից որոշումների փոփոխությունների մասին տպագիր նյութերից և պաշտոնական կայքից տեղեկանալու ցածր մակարդակը
  - որպես վերապատրաստման միջոց նրանց մեծ մասի գործնական պարապմունքներ նախընտրելը՝ «փորձի փոխանակման» և/կամ «ուսումնավարժանքների» միջոցով:
  - մեծ մասի նախընտրությունը պարապմունքները աշխատանքային ժամերի հաշվին ու տեղում անցկացնելը, բայց չի բացառվում գործուղումների տարբերակը:

## 5. Եզրակացություններ և առաջարկներ

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների և իրավիճակի վերլուծության հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

5.1 SU-ների մաքսագերծման երկու կողմերը՝ մաքսագերծողներն ու մաքսատան աշխատակիցները գտնում են, որ վերջին տարիներին իրականացված հակակոռուպցիոն ծրագրի շնորհիվ ավելի շատ դրական, քան բացասական փոփոխություններ են տեղի ունեցել մաքսատան կողմից տրամադրվող ծառայության համակարգում, բայց դեռ պահպանվում են կոռուպցիոն ռիսկեր պարունակող մի շարք իրավիճակներ, որոնք կապված են.

- մաքսագերծման հայտարարագրի ներկայացման հետ, քանի որ այն համապատասխանում է պահանջվող միջազգային ստանդարտներին և լրացման համար ենթադրում է պատշաճ փորձառություն, որից զրկված են մաքսագերծողների 75%-ը, և այդ պատճառով նրանք չեն կարողանում ինքնուրույն լրացնել հայտարարագիրը, առավել ևս օգտվել պաշտոնական կայքից, ինչը առիթ է տալիս մաքսագերծողներից շորթել անցանկալի «վերադիր վճարներ»:
- մաքսագերծման այլ ներկայացվող փաստաթղթերին, որոնց շուրջ են առաջանում ավելորդ քաշքշուկներ և դրանցից ազատվելու համար ստիպված դիմում են «վերադիր վճարների», իսկ դիմողների 5%-ի օրինակով SU-ն ստիպված վերադարձնում է արտահանող երկիր.
- 1 ժամ կազմող սպասարկման ժամանակահատվածի հետ, բայց այն դեպքում, երբ հերթ չի լինում (օրական մաքսագերծվում է 100-120 SU ) և ներկայացվող փաստաթղթերը պատշաճ վիճակում են, հակառակ դեպքում ստիպված պետք է դիմեն «հատուկ վերաբերմունքի»:
- նաև մաքսագերծման գումարի չափը որոշելու մեթոդների մասին մաքսագերծողների մոտավոր կամ արդտ պատկերացումների հետ, և քանի որ բոլոր կարգերի SU-ի համար սահմանված գումարի չափը գտնվում է սանդղակի մեջ, որտեղ հստակ է միայն ներքին շեմը (ոչ պակաս, քան...), իսկ վերին շեմը որոշում է մաքսատունը, ինչը հղի է լուրջ կոռուպցիոն ռիսկերով:
- մաքսատան որոշումների բողոքարկման կարգի հետ, քանի որ այդ առիթով պետք է դիմել վերադաս ատյաններին, որոնք հիմնականում անհասանելի են, ինչը նույնպես կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

5.2 Հաշվի առնելով SU-ների Մաքսատան որակյալ ծառայությունների ապահովման և կոռուպցիոն ռիսկերի հնարավորինս նվազեցման նպատակադրումները և դրանց վերաբերյալ երկու կողմերի առաջարկները, իմաստ ունի ձեռնարկել հետևյալը.

- բարեփոխել և հստակեցնել մաքսային օրենսդրությունն ու հարակից կանոնակարգերը,
- կրճատել և պարզեցնել մաքսագերծման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը,
- վերամշակել մաքսագերծման գումարի չափը որոշելու մեթոդները, այդ աշխատանքում ներառելով մասնագետ-փորձագետների և կազմակերպել հանրային քննարկումներ,
- SU-ը ներկրումը դարձնել «արտոնագրված գործ» և առաջին անգամ ներկրողների հետ անցկացնել ուսումնավարժանքներ մաքսագերծման գործընթացի վերաբերյալ,
- մատչելի, գուցե և պարտադիր դարձնել բրոքերների օժանդակությունը, իսկ մաքսատան տեղեկատվական ծառայությանը տալ նաև խորհրդատվական իրավունք, գուցե վճարովի
- շարունակել SU-ների մաքսատան աշխատակիցների վերապատրաստումը՝ օրենքների և կանոնակարգերի փոփոխման դեպքում,
- բարձրացնել SU-ների մաքսատան աշխատակիցների սոցիալական կարիքների բավարարման մակարդակը
- SU-ների մաքսատան գործունեության վերահսկման համար ստեղծել հատուկ կառույց, որը կհամագործակցի անկախ վարկանիշային կենտրոնների հետ (օրինակ՝ կկարողանա գործունեությունը գնահատել «գաղտնի այցելու» մեթոդով):

#### ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տրանսպորտային միջոց ներկրողների ու համապատասխան մաքսատան աշխատակիցների կարծիքով, թեպետ վերջին տարիներին բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը, սակայն դեռ մնում են կոռուպցիոն ռիսկերը և դրանց հնարավորինս նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

- շարունակել մաքսային օրենսդրության ու հարակից կանոնակարգերի բարեփոխումը և հստակեցումը
- կրճատել և պարզեցնել մաքսագերծման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը,
- վերամշակել մաքսագերծման գումարի չափը որոշելու մեթոդները, այդ աշխատանքում ներառելով մասնագետ-փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ կազմակերպել հանրային քննարկումներ,
- SU-ի ներկրումը դարձնել «արտոնագրված գործ» և առաջին անգամ ներկրողների հետ անցկացնել ուսումնավարժանքներ մաքսագերծման գործընթացի վերաբերյալ, քանի որ մաքսագերծողների 75%-ը անիրագել է մաքսագերծման գործընթացից,
- մատչելի, գուցե և պարտադիր, դարձնել բրոքերների ծառայությունը, իսկ մաքսատան տեղեկատվական ծառայությանը տալ նաև խորհրդատվական իրավունք, գուցե և վճարովի
- շարունակել SU-ների մաքսատան աշխատակիցների վերապատրաստումը՝ օրենքների և կանոնակարգերի փոփոխման դեպքում,
- բարձրացնել SU-ների մաքսատան աշխատակիցների սոցիալական կարիքների բավարարման մակարդակը
- SU-ների մաքսատան գործունեության վերահսկման համար ստեղծել հատուկ կառույց, որը կհամագործակցի անկախ վարկանիշային կենտրոնների հետ (օրինակ՝ կկարողանա մաքսատան գործունեությունը գնահատել «գաղտնի այցելու» մեթոդով):

## SUMMARY

According to interviewed importers of vehicles and employees of the respective customs, though in recent years the quality of customs services has been improved, nevertheless corruption risks remain and the following should be implemented to reduce them:

- further improvement of customs' laws and regulations, customs clearance
- to reduce and simplify the list of documents for customs clearance of the vehicles
- to rewrite the methods for the determination of customs duties with the assistance of specialists and experts and holding public discussions with interested parties
- to make the import of vehicles a "Licensing activitie"and to organize trainings on the process of customs clearance of vehicles for beginner importers, since 75% of importers confess their incompetence in this
- to make available, possibly binding, brokers' services, and to allow service of custom information the provision of advice and services, possibly paid
- when changes are made to the customs laws and regulations, to continue training the staff of the custom of vehicles
- to increase the level of satisfaction of social needs of custom vehicles' staff
- create a special structure that will interact with the independent rating centers (for example, evaluate the performance of customs by the "secret client" method) to control the operation of the customs of vehicle

## Краткое резюме

По мнению опрошенных импортеров транспортных средств и служащих соответствующей таможни, хотя и за последние годы повысилось качество таможенных услуг, тем не менее остаются коррупционные риски и для их снижения следует реализовать следующее:

- продолжить совершенствование таможенных законов и правил растаможки
- сократить и упростить список документов для растаможки транспортных средств
- переработать методы определения таможенных пошлин с привлечением специалистов и экспертов и с проведением общественных обсуждений с заинтересованным сторонами
- импорт транспортных средств сделать «лицензионной деятельностью» и для начинающих импортеров проводить тренинги о процессе растаможки транспортных средств, так как 75% импортеров признаются в своей некомпетентности в этом
- сделать доступным, возможно и обязательными, услуги брокеров, а службе информации таможни разрешить предоставление консультаций и услуг, возможно платных
- при внесении изменений в таможенные законы и правила, продолжить переподготовку служащих таможни транспортных средств
- повысить уровень удовлетворения социальных потребностей служащих таможни транспортных средств
- для контроля над работой таможни транспортных средств создать специальную структуру, которая будет взаимодействовать с независимыми рейтинговыми центрами (например, оценивать работу таможни методом «тайного клиента»)